



**«ԻՆՏԵՐՆԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ**



**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ 2023**

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ

Հ. Շիրազի «Անի» պոեմի պատմական
հիմքը և բառապաշարի առանձնահատկությունները

ԱՌԱՐԿԱ

Հայոց լեզու և գրականություն

ՀԵՂԻՆԱԿ

Նելլի Թադևոսյան

ՄԱՐԶ

Երևան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Գ. Մահարու անվան հ.176 հիմն. դպրոց

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
ԳԼՈՒԽ 1	4
ՀՇԻՐԱԶԻ <<ԱՆԻ>> ՊՈԵՄԸ.....	4
1.1 ՀՇԻՐԱԶԻ <<ԱՆԻ>> ՊՈԵՄԸ.....	4
1.2 ՀՇԻՐԱԶԻ <<ԱՆԻ>> ՊՈԵՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ	5
1.3 ՊԱՏՄԱԿԱՆ ՀԻՄՔԸ:.....	5
ԳԼՈՒԽ 2	7
ՀՇԻՐԱԶԻ <<ԱՆԻ>> ՊՈԵՄԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՉԱՄԻՋՈՑՆԵՐԸ.....	7
ԳԼՈՒԽ 3	11
ՀՇԻՐԱԶԻ <<ԱՆԻ>> ՊՈԵՄԻ ՀԵՐՈՍՆԵՐԸ.....	11
ԳԼՈՒԽ 4	14
ՀՇԻՐԱԶԻ ԳՈՎՔ-ՁՈՆԵՐԳԸ՝ ՆՎԻՐՎԱԾ ԱՆԻԻՆ.....	14
Եզրակացություն	16
Օգտագործված գրականության ցանկ	17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության օբյեկտը: Սույն աշխատանքի հետազոտության օբյեկտ է հանդիսանում Հ.Շիրազի առաջին անգամ 2011թ. տպագրված <<Անի>> մեծածավալ պոեմը: Անտիպ մնալով տասյակ տարիներ՝ այն մեծ հետաքրքրություն է ներկայացնում լեզվաբանների, գրականագետների, ուսուցիչների և աշակերտների համար:

Հետազոտության նյութը: Հետազոտության նյութը պոեմի բուն շարադրանքի դասավանդումն է և շիրազյան յուրահատուկ բառապաշարի ուսումնասիրությունը: Քանի որ պոեմը լուրջ պատմական ուսումնասիրությունների արդյունքում է ստեղծված, և հիմքը պատմական է, մանկավարժին սովորողին հնարավորություն է ընձեռնվում գեղարվեստական ստեղծագործությունը ազատորեն վերլուծել՝ թե՛ պատմական տեսանկյունից, թե՛ գեղարվեստական: Ստեղծագործության նյութը է նաև պոեմի բովանդակությունը, գաղափարը, կերպարների և նրանց բնավորությունների առանձնահատկությունները, պոեմի լեզուն, ոճը, բառապաշարը:

Հետազոտության նպատակը: Հետազոտության նպատակն է ուղղորդել սովորողներին գեղարվեստական բնագրի վրա աշխատելիս հետազոտել պոեմի պատմական հիմքը, սովորեցնել ուսումնասիրել պոեմի բառապաշարի, գեղարվեստական արտահայտչամիջոցների կիրառման շիրազյան տարբերակները, բացահայտել շիրազյան ինքնատիպ և անկրկնելի բառապաշարի հեղինակային յուրահատկությունը:

Հետազոտության նորույթը: Հ.Շիրազը, իր մեծությամբ, իր՝ համազգային ճանաչմամբ հանդերձ, միշտ նոր է և միշտ ուշադրության արժանի: Սույն պոեմի տպագրությունն ինքնին նորույթ է գրականագիտական աշխարհում և կարոտ է հետազոտությունների, ուսումնասիրությունների: Ստեղծագործությունը նորույթ է թե՛ թեմայի, թե՛ բովանդակության, թե՛ ծավալային ընդգրկման առումով:

Հետազոտության արդիականությունը: Պոեմում արձարծված թեմաները միայն առաջին հայացքից են պատմական. իրականում դրանք կարծես գրված լինեն մեր օրերում: Պոեմն ուղերձ է, ուշիմության դաս ներկա և ապագա սերունդներին: Պատմական հայրենիքի վերադարձի, ազգային երկպառակության, աղանդավորականության, օտարամոլության վտանգների բացահայտ ցուցադրության հիանալի օրինակ է դրվել մեր սովորողի սեղանին:

ԳԼՈՒԽ 1

Հ.ՇԻՐԱԶԻ «ԱՆԻ» ՊՈՆԵՄԸ

1.1 Հ.ՇԻՐԱԶԻ «ԱՆԻ» ՊՈՆԵՄԸ

Հ. Շիրազի <<Անի>> պոեմը գրվել է 1950-1951 թվականներին, սակայն հիասքանչ պոեմի տպագրությունը մնացել էր սերունդներին: Ստալինյան ռեժիմի արյունոտ ձեռքը իր ճանապարհից մաքրում էր ցանկացած ինքնուրույն գաղափար ու միտք և չէր կարող հանդուրժել Արևմտյան Հայաստանին, ազգային-ազատագրական պայքարին վերաբերող, ազգապահպանությանը, ինքնությանը առնչվող թեմաներով ստեղծագործությունների հրատարակություն: Հատկապես, եթե ընդգծենք, որ պոեմում առկա են տողեր, որոնք հաստատապես կլիանգարեին ստալինյան ժամանակաշրջանի գրահրատարակչական դիրքորոշումներին, ինչպես նաև խիստ վտանգավոր կարող էին լինել հենց իր՝ բանաստեղծի համար: Գուցե գրաքննության հայացքից չեն վրիպել այդ բառերը, բայց պոեմի անտիպ մնալը, հնարավոր է, փրկել է մեծ պոետին բռնակալական համընդհանուր մսաղացից :

<<-Չէ՛, բռնությունը, հա՛յր իմ, հեշտ է միշտ,-

Դժվարը մեղմով իշխելն է անվիշտ...>>:

<<Միշտ նեղճակատն է բռնակալ դառնում,

Բուր է, ով ազգի կոկորդն է բռնում...

Միշտ նեղճակատն է բռնագայլն դառնում... >> :¹

Տասնամյակներ տևած սպասումը իրականություն է դարձել 2011 թվականին: Ինչպես պատմում է Սամվել Մուրադյանը, տպագրության՝ տասնամյակներով ուշացումը մտահոգել է ԵՊՀ ռեկտոր Արամ Միմոնյանին որը հնարավորություն է ստեղծել պոեմի տպագրության համար: Սա իսկապես հայրենանվեր նախաձեռնություն է: Այսօր այն իրականություն է:

Անին ընդհանրապես ոգևորել է շատ արվեստագետների, և այն ներկայացված է բազմաթիվ ստեղծագործություններում, հատկապես՝ Խ.Աբովյանի ստեղծագործություններում ²:

Խորհրդային իշխանության ժամանակ <<Անի>> պոեմից հրատարակված փոքրիկ հատվածով ներշնչված՝ Մաժակ Թոշիկյանի գրում է <<Տեսնեմ Անին ու նոր մեռնեմ...>> երգը, որի հնչյունները գերում են, հուզում բոլոր ունկնդիրներին, և կարծում ենք, չկա մի հայ, որը լսեր և չճանաչեր այդ մեղեդին:

¹ . Շիրազ Հ.: Անի: Պոեմ/Կազմ.՝ Ա.Կարապետյան (Շիրազ).-Եր.: ԵՊՀ հրատ. 2011

² . Հայոց պատմություն: Դասագիրք բարձր, ուսումն. Հաստատ. Համար: Խմբագրությամբ պրոֆ. Հր.Միմոնյանի: ՀՀ ԳԿՆ ԵՊՀ Հայոց պատմ. ամբիոն: - Երևան, ԵՊՀ հրատ.- 2012

1.2 Հ. Շիրազի «ԱՆԻ» ՊՈԵՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ՊԱՏՄԱԿԱՆ ՀԻՄՔԸ, ԴԱՐԱՇՐՋԱՆԸ

Խոսելով Հ. Շիրազի «Անի» պոեմի մասին՝ հարկ է նշել, որ այն մեծածավալ ստեղծագործություն է՝ բավականին բարդ կառուցվածքով:

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ:

1. Նախերգանք (2 մաս)
2. Մաս առաջին (8 գլուխ՝ ընդհանուր՝ 55 մաս)
3. Մաս երկրորդ (10 գլուխ՝ ընդհանուր՝ 30 մաս)
4. Գլուխ նախավերջին
5. Գլուխ վերջին (6 մաս)
6. Մաս վերջին (2 գլուխ՝ ընդհանուր՝ 20 մաս)
7. Վերջին գլուխ (5 մաս)
8. Վերջերգանք (3 մաս):

Երկրորդ մասի 12-րդ գլուխը դրամատիկական ստեղծագործության կառուցվածք ունի. Ներկայացված են հերոսները՝ որպես դրամայի կերպարներ՝ կաթողիկոս, արքա, խոստովանահայր, սպարապետ:

Հ. Շիրազի «Անի» պոեմը հանգավորված ստեղծագործություն է, սակայն պոեմի տարբեր մասերը մեծ բանաստեղծը տարբեր քանակի վանկերով է գրել. որոշ հատվածներում 7 վանկ, մեկ այլ տեղ՝ 8, 10, 20 և այլն:

Օրինակ՝

...Քո այծյամին մի սպանե...(7 վանկ),

...Սրտում իրավ մղկտալով (8 վանկ),

...Բայց սիրո մեջ էլ եղիր իմաստուն (10 վանկ)

...Ելած Բյուզանդից, ոստանից հունաց, դեպի ոստանը մայր Հայաստանի (20 վանկ):

1.3 ՊԱՏՄԱԿԱՆ ՀԻՄՔԸ:

Հ. Շիրազի «Անի» պոեմը նկարագրում է 11-րդ դարասկզբի հայ ժողովրդի համար դրամատիկ մի շրջան, երբ Բագրատունիների արքայատոհմը անկում էր ապրում, և ներքին հակասությունները՝ աղանդավորական շարժումը՝ թոնդրակյանությունը, ինչպես նաև՝ հունամոլ ուժերը, պառակտում էին թե՛ արքայական ընտանիքը, թե՛ երկիրն ամբողջությամբ: Դրան էին նպաստում նաև արտաքին ուժերը, որոնք խորացնում էին երկպառությունները Բագրատունյաց Հայաստանում:

ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնի կողմից հրատարակված դասագրքում այսպես է նկարագրվում պատմական այս խառնակ ժամանակաշրջանը.

<<Բյուզանդիայի կայսր Վասիլ 2-րդի հետ բանակցություններ վարելու և նրա հարձակումը կանխելու նպատակով հայոց թագավոր Հովհաննես-Սմբատը 1022թ. հունվարի սկզբին բյուզանդամոլ կաթողիկոս Պետրոս Ա Գետադարձի գլխավորությամբ մի պատվիրակություն ուղարկեց Տրապիզոն: Կայսեր պարտադրանքով կաթողիկոսը կնքեց մի համաձայնագիր-կտակ, որով Հովհաննես-Սմբատի մահից հետո նրա տիրույթները՝ Անի մայրաքաղաքով, անցնելու էին Բյուզանդական կայսրությանը...>> :³

Պոեմին ծանոթանալիս ակնհայտ երևում է, որ Հ.Շիրազը խորապես ուսումնասիրել է պատմական ժամանակաշրջանը, այդ դարաշրջանի աղբյուրները: Միայն խոր իմացությամբ կարելի էր լիարժեք, մանրակրկիտ ներկայացնել երկիրը, Անի քաղաքը, պատմական և քաղաքական իրադրությունները: Մեծ բանաստեղծը պարզապես հիացնում է նյութի վերաբերյալ իր գիտակությամբ, թեմայի նկատմամբ շրջահայացությամբ, ծավալային զունագեղ նկարագրությամբ: Իհարկե, մենք գործ ունենք գեղարվեստական մեծ ծավալի հիասքանչ ստեղծագործության հետ, այնուամենայնիվ, պատմականությանը հարազատ մնացած բանաստեղծը հաղորդել է նկարագրած ժամանակաշրջանի արքային, գյուղացուն, զորավարին, շինարարին հատուկ աշխարհայացքը, մտածելակերպը, վերաբերմունքը, չափանիշները, մարդկային որակները և գնահատականները:

Շիրազի կողմից նկարագրվում է Անիի հարստությունը, առևտրական կապերի հսկայական ծավալը, թվարկվում են ներմուծվող և հայկական ապրանքների հետ փոխանակվող ապրանքատեսակները՝ մորթիներ, քուրք, մուճակ, մույկ, մոմ, նեկտար, թույն, կանթեղ, հալվե և այլն: Հայ ժողովրդի պատմության այդ ժամանակաշրջանին վերաբերող պատմական աղբյուրները բավականին հարուստ են, տեղեկություններով հագեցած (Արիստակես Լաստիվերցի, Սամուել Անեցի, Թովմա Արծրունի...): Բանաստեղծը քաջատեղյակ է նյութին, և թեման ներկայացված է մանրամասնորեն լուսաբանված:

³. Հայոց պատմություն: Դասագիրք բարձր, ուսումն. Հաստատ. Համար: Խմբագրությամբ պրոֆ. Հր.Միմոնյանի: ՀՀ ԳԿՆ ԵՊՀ Հայոց պատմ. ամբիոն, 2012

ԳԼՈՒԽ 2

Հ. ՇԻՐԱԳԻ «ԱՆԻ» ՊՈՆԵՄԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՉԱՄԻՋՈՑՆԵՐԸ

Հ. Շիրագի «Անի» պոեմը տպագրության ուշացման պատճառով քիչ է ուսումնասիրված գրականագետների կողմից: Մակայն առաջին իսկ ընթերցումը գեղագիտական մեծ հիացմունք է առաջացնում ընթերցողի մոտ, քանի որ Հ. Շիրագը, մեծ պոետին հատուկ շոայլությամբ, գրել է հզոր արվեստով, ճկունությամբ, անգուգական բառապաշարով, որն առանձնահատուկ հմայքով ու ճոխությամբ է դրսևորվում շիրագյան տողում: Այս պոեմը շիրագյան քնարերգության մեջ ինքնատիպ էջ է բացում՝ ներքաշելով ընթերցողին գլխապտույտ իրադարձությունների, անսպասելի շրջադարձների մեջ՝ միայն Հ.Շիրագին հատուկ ոճով ու հնարավորությամբ: Այս ստեղծագործության ուսումնասիրությունը նպաստում է բառապաշարի հարստացմանը: Ըստ նոր ՀՊԶ-ի՝ մեծ ուշադրության է արժանի սովորողի գեղարվեստական խոսքի ճկունությունը: Սովորողը պետք է գրական հայերենով ստեղծի տարբեր ոճերի և ժանրերի գրավոր և բանավոր խոսք՝ օգտագործելով տարբեր արտահայտչամիջոցներ և համապատասխանեցնելով դրանք իրավիճակներին:⁴

Պոեմի գրվածքը տարբերվում է ծավալով, կառուցվածքով, գեղարվեստական արտահայտչամիջոցների կիրառման հմտությամբ: Պոեմում մեծ քանակություն են կազմում միայն Շիրագին հատուկ մակդիրները, համեմատությունները, փոխաբերությունները, նույնասկիզբ, նույնավերջ տողերը, հակադրությունները, բաղաձայնությունը, կրկնաբառությունը և այլն: Գեղարվեստական մեծ հմայք են հաղորդում առածները, ասացվածքները, թևավոր խոսքերը կամ ժողովրդական արտահայտությունները: Մեկ անգամ ևս իր գրչով փաստելով մեծ ժողովրդի մեծ զավակը լինելու հանգամանքը՝ Շիրագը հարազատ է մնում ժողովրդական մտածողությանը՝ հմտությամբ և ճկունությամբ ամփոփելով մտքի խտացումները հերոսների խոսքերում կամ հեղինակային մտորումներում: Հեղինակը հաճախ մեծ վարպետությամբ կիրառում է նույնահնչյուն բառեր՝ կիրառելով բաղաձայնությունը՝ որպես պատկերավորման գեղեցիկ միջոց: Այս ստեղծագործությունը մեծապես նպաստում է բառապաշարի հարստացմանը: Ըստ նոր ՀՊԶ-ի՝ լեզվական գրագիտության և կարողունակության կարևորագույն տարրերից է այն հանգամանքը, որ սովորողները տիրապետում են հայոց լեզվին, գրավոր և բանավոր կերպով գրագետ հաղորդակցվում են մայրենի լեզվով և այլ օտար լեզուներով՝ ըստ լեզվական կանոնների և իրավիճակների:⁵

⁴. <https://lib.armedu.am/files/resource/files/2022-02-24/6588f3a3ca1ed9b5dd824197a59c1222.pdf>

⁵. Նույն տեղում:

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՉԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ

1. ԿՐԿՆԱԲԱՌԵՐ

Ա. Քարավաններով ծով ու ցամաքի պերճանքի անճառ,
Քարավաններով այն գինեվաճառ,
Քարավաններով այն մարգարտաշար ⁶
Բ. Կա, որ իր արքան կինն է գեղանի,
Կա, որ որ գողունի իր հարձն է լինում,
Կա, որ սին փառաց տենչն է մեղսաբեր,
Կա, որ իր եսն է, կույր կամքն անվեհեր...⁷:

Գ. Ամեն գլխից մի ոսկե խաչ,
Ամեն գլխից մի պայտ, մի ձի,
Ամեն գլխից մի ուլ, մի ցուլ,
Ամեն գլխից մի բմբուլ բարձ...⁸

Դ. Ետ վերցնում Վանա ծովը,
Ետ վերցնում Արածանին,
Ետ վերցնում ողջ Բզնունին,
Ետ վերցնում Կապուտանը,
Ետ վերցնում Մուշն ու Վանը,
Ետ վերցնում Ղարսա բերդը...⁸:

2. ԲՍՂԱԶԱՅՆՈՒՅԹ

Ա. Խորասանի խալի ու խույրեր ու խարախրխա
Բ. Գողթանի գիտոր, Տարոնի տորոն, Գնունյաց գինի
Գ. Ու Մըսրա մզրաղ, Գյումրվա գութան ⁹
Դ. Շնաշուք շիրիմ կունենաս, անշուշտ...
Ե. Հայոց քարաշատ քար-քարաստանում,
Վշտից քարացած մայր Հայաստանում...

3. ՄԱԿԴԻՐՆԵՐ

Գաղտնաչար մաղձ, գահաքաղց հայ, մահապուրծ արքա, արնագինոտ պատմություն, երկնածնրադիր Նարեկացի, հայրենահան հայ, տագնապաթաքույց խաղաղություն, հայոց արնաշաղախ բախտ, անաստված աստված, մարմնաճոխ հարձ, գինեբույր վարդ, ունայնակրակ գաղտնագիր, ազգադավ ավետիք, բյուրասպի բերդ

4. ՀԱԿԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Աղվեսին հա՞րկ տար առյուծն ամեհի...

⁶ . Շիրազ Հ.: Անի: Պոեմ/Կազմ.՝ Ա.Կարապետյան (Շիրազ).-Եր.: ԵՊՀ հրատ. 2011

⁷ .Նույն տեղում, էջ 81

⁸ . Շիրազ Հ.: Անի: Պոեմ/Կազմ.՝ Ա.Կարապետյան (Շիրազ).-Եր.: ԵՊՀ հրատ. 2011

⁹ .Նույն տեղում, էջ 27

Բ. Ինձ եղնիկի սիրտ, եղբորս՝ վագրի...
Գ. Հասավ ահավոր օրհասի նման,
Ոչ շքախմբով, այլ սգախմբով...
Դ. Կանաչ խոսեց՝ սև գործեց,
Կապույտ խոսեց՝ սև գործեց,
Կարմիր խոսեց՝ սև գործեց,
Ճերմակ խոսեց՝ սև գործեց...

5. ԱՆՁՆԱՎՈՐՈՒՄ

Ա. Աշխարհը գիշերն իր գլխին քաշեց...
...Քուն մտավ դշխո- Անին բովանդակ...

6. ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ա. Բազմությունները, անգոր մանկանց պես,
Ա. Խեղդվում էին ահեղ գիշերվա մութի հեղեղում...
Բ. Բայց ամուլ է նա ոսկու պես...
Գ. Թագուհուդ պես մի թագ չկա...

7. ՉԱՓԱԶԱՆՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. ...ՈՒ եկել ծով են գետից պահանջում...

Կիրառված հաջորդ չափազանցությունը նման է <<Սասունցի Դավիթ>> էպոսի Մըսրա Մելիքի գորքի բնութագրմանը. այսինքն՝ բոլոր ժամանակներում թշնամին նույն ավերիչ ուժով է գալիս, և նրան դիմագրավելուն միշտ պետք է պատրաստ լինել:

Բ. Յոթը բյուր է՝ թուր-տեգավոր,
Ութը բյուր է ոտավորը,
Յոթը բյուր է կորտակավոր,
Ութը բյուր է վաղրավորը,
Յոթը բյուր է կապարճավոր
Ութը բյուր է նետավորը...

8. ՓՈԽԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Ամուլ է գիրկն իմ կաքավի...

ԱՍՈՒՅԹՆԵՐ, ԹԵՎԱՎՈՐ ԽՈՍՔԵՐ, ԱՌԱՇՆԵՐ

Ա. Հոր փորոզը, հորը կրնկնի¹⁰

Բ. Կին կա՝ մարդուն թագի տանում, մինչ դրախտ է հանում,

Կա էլ՝ գլխի թագն է հանում, մինչև դժոխք է տանում:

Գ. Ով բախտի է անվերջ ձգտում՝ նա է անվերջ բախտավոր...

Դ. Չարության ծովն էլ կույ կերթա մի կաթիլին բարության...

Ե. Դրախտի ուղին սարն ի վեր է, դժոխքինը՝ սարն ի վար...

Զ. Ագահ մարդը՝ բախտի մեջ էլ՝ նման է միշտ դժբախտի...¹¹

ՀՈՍԱՆԻՇՆԵՐԻ, ՀԱԿԱՆԻՇՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆ

Ա. Լուսնի խոտերից գիշերով քամված դեղ-սպեղանի, բանգ ու բալասան

¹⁰. Շիրազ Հ.: Անի: Պոեմ/Կազմ.՝ Ա.Կարապետյան (Շիրազ).-Եր.: ԵՊՀ հրատ. 2011

¹¹. Նույն տեղում, էջ 48

Բ. Ահել, բայց խելքով մի մանուկ է դեռ...

Հ.Շիրազի <<Անի>> պոեմում կիրառված են միայն շիրազյան գրչին և ոճին հատուկ բառեր, որոնք այնքան դիպուկ և ճշգրիտ են արտացոլում բանաստեղծի ասելիքը՝ խոսքն ուղղելով նպատակակետին՝ ընթերցողի սրտին ու գիտակցությանը: Մեկ այլ գրողի մոտ գուցե այդ հանկարծաստեղծ ու անսպասելի բառերն իրենց տեղը չգտնեին, ինչպես Շիրազի գրվածքի դեպքում:

Օրինակ՝ վասակավայել, բյուզանդասուր, արքայաբարձ, պարսիկանիզակ, հայրենահան, յոթնածով, վահագնավայել, թաթարագրահ, մթնաբավիղ, քինաթուր, տուրևառիկ, գանձաթաքույց, ահաբերդ, ավարայրվել, հայաշխարհ:

Սույն նմուշներով կարելի է ստեղծել քարտային աշխատանք՝ առաջարկելով դասակարգել գեղարվեստական արտահայտչամիջոցները:

Քարտ 1

Անձնավորում	Մակդիր	Համեմատություն	Բաղաձայնույթ

Քարտ 2

Հոմանիշներ	Հականիշներ	Կրկնաբառեր

ԳԼՈՒԽ 3

Հ. ՇԻՐԱԶԻ «ԱՆԻ» ՊՈԵՄԻ ՀԵՐՈՄՆԵՐԸ

Որպես մեծածավալ ստեղծագործություն՝ Հ.Շիրազի «Անի» պոեմն ունի բազմաթիվ հերոսներ, որոնց մի մասը պատմական անձինք են՝ Բագրատունյան արքա Գագիկ Առաջինի ավագ որդին՝ Հովհաննես-Սմբատ (պոեմում՝ Օհան-Սմբատ), կրտսեր որդին՝ Աշոտը, սպարապետ Վահրամ Պահլավունին, կաթողիկոս Պետրոս Գետադարձը, իշխան Վեստ Սարգիսը, Տրդատ ճարտարապետը, Անիի բնակչուհի Այծեմնիկը (պոեմում՝ Այծյամ): Սակայն հարկ է նշել, որ պոեմի հերոսները, անշուշտ, գեղարվեստական կերպարներ են, որոնք պատկերված են պատմականի և գեղարվեստականի համադրումով. ուստի, այս հերոսներին վերլուծելիս պետք է նախ և առաջ տեսնել նրանց մեջ գեղարվեստական կերպարներ, թեև, ինչպես ասվել է, բանաստեղծը առավելապես հարազատ է մնացել պատմականությանը:

ՕՀԱՆ-ՍՄԲԱՏ ԵՎ ԱՇՈՏ: Անիի պատմության այս անցքը՝ «Գագիկ Առաջինի մահից հետո գահաժառանգման համար սուր պայքար ծավալվեց նրա որդիներ Աշոտի և Հովհաննես-Սմբատի միջև»¹² պոեմում բնութագրվում է գեղարվեստական համեմատություններով, հակադրություններով:

Երկու որդի թողեց արքան,

Գագիկ արքան առնացի,

Մեծն առյուծի տեսքով, սակայն

Փոքրը սրտով առյուծի¹³:

Առյուծատեսք որդին թուլամորթ Օհան-Սմբատն է, իսկ թուլակազմ առյուծասիրտը՝ Աշոտը:

Պատմագիր Մատթեոս Ուռհայեցին Հովհաննես-Սմբատին բնութագրում է մտքով իմաստուն, մարմնով ծույլ ու վարանող, պատերազմական գործերում՝ թուլամորթ ու անվարժ, իսկ Աշոտ Չորրորդին՝ խիզախ ու քաջ, հզոր ու անպարտելի, պատերազմներում հաղթող: Շիրազի պոեմում կերտված են հենց այսպիսի կերպարներ, որոնց միջև ծագում է գահատենչ պայքար: Օհան-Սմբատը եղբոր դավաճանությունը որակում է ծանրագույն համեմատությամբ՝ «Ո՛վ Կայենից դու Կայեն...»:¹⁴ Երկպառակությունը իր խորհուրդներով խորացնում է իշխան Վեստ Սարգիսը, որին հեղինակը համեմատում է նենգ Սյունու հետ՝ արարքը համադրելով 5-րդ դարի դավաճան Վասակ Սյունու հետ: Օհան-Սմբատը կարծում է, որ հենց Վեստ Սարգիսն է բանակցում աղանդավոր թոնդրակեցիների հետ:

Նա գորք տվեց իմ չեղբորը,

¹². Հայոց պատմություն: Դասագիրք բարձր, ուսումն. Հաստատ. Համար: Խմբագրությամբ պրոֆ.

Հր.Միմոնյանի: ՀՀ ԳԿՆ ԵՊՀ Հայոց պատմ. ամբիոն: - Երևան, ԵՊՀ հրատ.- 2012

¹³. Շիրազ Հ.: Անի: Պոեմ/Կազմ.՝ Ա.Կարապետյան (Շիրազ).-Եր.: ԵՊՀ հրատ. 2011

Նա գորք հանեց Անիի դեմ,
Նա էր փորել այն սև հորը
Թոնդրակեցոց բահով դժխեմ:

Ծավալված պայքարի, դավերի, իրար դեմ լարած որոգայթների արդյունքում երկիրը պառակտվում է:

Մնաց Վանանդ իր կես թագով
Թոքրին՝ քաջին՝ Աշոտին
Անիս մնաց իմ Շիրակով
Մեծին՝ Օհան-Սմբատին...
ՍՊԱՐԱՊԵՏ ՎԱՀՐԱՄ ՊԱՀԼԱՎՈՒՆԻ:

Ինչպես Սասնա Դավիթն է ընկնում Մըսրա Մելիքի հորի մեջ, այնպես էլ Օհան-Սմբատն է ծուղակում հայտնվում, սակայն ժամանակին փրկության հասած սպարապետը փրկում է արքայի կյանքը: Պատահական չէ, որ Արիստակես Լաստիվերցին Վահրամ Պահլավունուն բնութագրում է հետևյալ բառերով. <<...Բայց Վահրամը, որը մի հզոր անվանի բարեպաշտ ու մի վեհ մարդ էր, այնպես որ ոչ ոք չկար նրան հավասար...>> :¹⁴

Պոեմում Վահրամ Պահլավունի սպարապետի կերպարը ներկայացված է Սասնա ծոերին բնորոշ հատկանիշներով. նա միշտ պատրաստ է պաշտպանել իր արքային, իր հայրենիքը, սթափ է դատում, ազնիվ խորհրդատու է թագավորի համար, իր զենքը՝ թուր-Հավլունին, Սասնա հերոսների նման օգտագործում է անիրավ թշնամիների դեմ:

Ժողովրդին խորհրդանշող մի պառավ կին նրան բնութագրում է <<Դու ես,-ասավ,- Հիսուն հայի...>> բառերով:

<<Սպարապետ Պահլավունին
Կանչեց՝ <<Բերդ է իմ Անին...>>

ԿԱԹՈՂԻԿՈՍ ՊԵՏՐՈՍ ԳԵՏԱԴԱՐԶ: Կաթողիկոսի կերպարն իհարկե պատմական հիմք ունի և բոլոր աղբյուրները վկայում են, որ նա է եղել մասնակիցն ու նաև նախաձեռնողը Անին Օհան-Սմբատի մահից հետո Բյուզանդիային կտակելու գաղափարի ջատագովներից: Ա. Լաստիվերցին նրան նկարագրում է որպես. <<...Պետրոսը սաստիկ գանձասեր էր...>> կաթողիկոսին անվայել բնութագրումով:¹⁵

Շիրազյան նկարագրով Պետրոս Գետադարձը՝ <<...սևագլուխ անգլուխը կույր...>>, պատրաստ էր վաճառել հայրենիքը՝ հանուն անբավ հարստության. <<Ծախել երեսուն արծաթով Անին՝ վերադառնում էր ոգով ամայի...>>: Պոետի համար կաթողիկոսի դավաճանությունը և Հուդայի կողմից՝ Քրիստոսի մատնությունը ծանրագույն համեմատություն է, բայց շատ հավաստի: Այդ պատճառով էլ սպարապետը խիստ բառերով է դիմում կաթողիկոսին.

...Լռի՛ր, շնահա՛յր, էլ հայր չես դուն...

¹⁴ . Ար. Լաստիվերցի: Պատմություն: Թարգմանությունը՝ Վ.Ա.Գևորգյանի: Հայ մատենագիրներ: <<Հայաստան>> հրատ., Երևան.- 1971

¹⁵ . Նույն տեղում, էջ 54:

Ով արծաթասեր, ընչաքաղց աղվես,
Աղվեսադրոշմ պիտի խարանվես...
ԱՅՕՅԱՄ:

<<Այծեմնիկն էր նա, հրաշագեղ դուստրը Տրդատի...>>:

Այծյամը Տրդատ ճարտարապետի տասնյոթամյա դուստրն է, որին սիրահարվում է Օհան-Սմբատ արքան: Այդ իմանալով՝ Տրդատը զգուշավորությամբ խորհուրդ է տալիս հեռու մնալ շատ երիտասարդ աղջկանից՝ հոգում խոր ցավ ու անհանգստություն զգալով դեռահաս աղջկա համար: Տրդատը փորձում է կասեցնել աղջկան սպառնացող ահեղ փորձությունը՝ նրբորեն նկատելով. <<... Նա տասնյոթ է, իսկ դու՝ քառասուն...>>, կամ մի այլ դրվագում դիպուկ համեմատությամբ բացատրում.

... Կոկոն է, տե՛ր իմ,
Չեմ ուզում խոցվես,
Նա պիտի բացվի,
Դու պիտի գոցվես...

Սակայն պետք է նկատել, որ պոեմի հերոսուհի Այծեմնիկը կամ Այծյամը գեղարվեստական կերպար է, քանի որ Անիի բնակչուհի Այծեմնիկը, ըստ պատմագիր Սամուել Անեցու, Անի քաղաքի 12-րդ դարի պաշտպանության հերոսուհիներից է: Ս. Անեցին վկայում է. <<...յայսմ պատերազմի առաքինացաւ կին մի ի վերայ պարսպացս՝ առնացի ստացեալ սիրտ հալածականս առնէր քարամբք ըզմարտուցեալսն յելանելն ընդ պատուարսն՝ առ ոչինչ համարեալ զխոցուածս նետիցն գոր վիրաւորէին արտաքուստ եւ էր նորա ըստ արժանի արագութեան իւրոյ, Այծեամն կոչեցեալ>>:¹⁶

Հր. Աճառյանի <<Հայոց անձնանունների բառարան>>-ում Այծյամ բառը բացատրվում է որպես. <<Այծեամն Անեցի, հայ հերոսուհի, որ Անիի պարիսպների վրայից քաջաբար կռվում էր Փատլուն ամիրայի զորքի դեմ և նրանց արձակած նետերը իր վերքերից դուրս քաշելով՝ նրանց դեմ էր արձակում>>:¹⁷

¹⁶. Սամուել Անեցի: Հաւաքմունք ի գրոց պատմագրաց յաղագս գիւտի ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս: Հայաստանի Ամերիկեան համալսարան

¹⁷. Աճառյան Հր.: Հայոց անձնանունների բառարան: Երևան. ԵՊՀ հրատ.:

ԳԼՈՒԽ 4

Հ. ՇԻՐԱԳԻ ԳՈՎՔ-ՉՈՆԵՐԳԸ՝ ՆՎԻՐՎԱԾ ԱՆԻՒՆ

Մեծ պոետի նվիրական երազանքը, իհարկե, հին մայրաքաղաքի միացումն է մայր Հայաստանին նեղ իմաստով, իսկ լայն իմաստով՝ պատմական հայրենիքի ամբողջական վերամիավորումը: Շիրազյան տողը՝ քնարերգության բնկուն տաղանդով, գովերգում է մայրաքաղաք Անին՝ իր ամբողջ շքեղությամբ: Շոայլորեն, միայն Հ.Շիրազին հատուկ շոինդով նա ընթերցողին ուղեկցում է մայրաքաղաք Անիի պարիսպների կողքով, անցկացնում կամուրջների տակով, տանում Անիի միջազգային շուկան, ցուցադրում քաղաքի տնտեսական, նյութական, ռազմական հզորությունը, ամրացնում հայի ոգին՝ որպես կառուցող, որպես շինարար և իհարկե, որպես հայրենապաշտպան:

Ա. Առաջին անգամ Անին տեսնողը
Պարիսպներով էր զարզանդում, ապշում,
Ետ քաշվում ահից, իսկ ներս մտնողը...
... Թե՛ մայր տաճարով այս չնաշխարհիկ,
Թե՛ նրբաքանդակ հայ խաչքարերով,
Թե՛ հազար ու մի հայոց վանքերով...
Բ. ...Անին մայրն է Հայաստանի
Անին գանձ է երկրիս վրա,
Հայաստանը ճոխ մատանի՝
Անին անգին քարն է նրա...
Ծնվեմ, Անի՛, քո մայր գրկում,
Մեռնեմ Անի մայր քաղաքում...

Հ.Շիրազի պոեմի Անի քաղաքը գեղարվեստական կերպար է. նրա մեջ ամփոփված է շիրազյան հոգու մեծ կարոտը: Այդ է պատճառը, որ պոետը, կարծես անուղղակիորեն, բայց հաստատապես գիտակցված է այդքան հաճախ թվարկում Արևմտյան Հայաստանի կորցրած տեղանունները՝ Տարոն, Վասպուրական, Սասուն, Մուշ և այլն:

Ա. ...Էլ չի հայոց ծուխ ելնում
Տեղահանված Տարոնում,
Վասպուրականն հայ չունի՝
Բույնն է գաղթած թռչունի:
Մշո հողն էլ, ա՛ իս, ասում
Էլ հայ լեզվով չի խոսում...
Կամ մեկ այլ հատվածում՝
Բ...Մեր սարերը, Սասունը մեր.
Մեր Մասիսը՝ մայր սյունը մեր:

Մեզ մի պոկեք մեր Վաթանից
Մեր Գողթանից, մեր հող-տանից...

Առաջին հայացքից պոեմում քննարկված թեման վերաբերում է հայոց պատմության 11-րդ դարասկզբի իրադարձություններին, բայց Հ.Շիրազի գրիչը միշտ հավատարիմ է մնացել ազգային գերխնդրին՝ պատմական հայրենիքի կորստին, և մեծ պոետը քողարկված թե անթաքույց միշտ հիշեցրել է իր ընթերցողին, թե ինչին է ուղղված իր գրիչը: Ուստի, չտեսնել ազգային մերօրյա խնդիրը, որը մշտապես եղել է շիրազյան քնարերգության առանցքային թեմատիկան, նշանակում է ուրանալ բանաստեղծի՝ բոլոր ժամանակների հայ մարդուն, առավել ևս մեր օրերի հային ուղղված կոչ-պատգամը: Այդ պատճառով էլ ակնհայտ հատվածներով Շիրազը ցույց է տալիս ազգային դժբախտության պատճառները. նա և՛ գովերգում է մեր ժողովրդին, և՛ մատնացույց անում մեր թերությունները:

Մն անգոր իջավ իմ սրտի վրա,
Հայոց արծվի մի թևս պոկվեց,
Մի աչքս հանվեց, այն աչքս ահա,
Որ Վանա ծովն է, այն աչքս հանվեց:
Այն թևս պակվեց, այն թևս հայրենի,
Որ ժողովուրդն է իմ քաջ Տարոնի:

Շիրազին միշտ մտահոգել է օտարամոլությունը, և նա ուզում է մշտաբանում աչքով հիշեցնել սերունդներին, թե ինչի է հասցնում օտարների հետ ամուսնությունը:
Իրանի շահի դստերն ես բերել
Այսօր գաղտնի հարձ, վաղը... թագուհի...

Կամ մի այլ հատվածում Շիրազն ասում է, որ Հռոմի բուրվառը հեղում է վառող՝ նորից և նորից հիշեցնելով զգոնության մասին: Մեկ ավելի տպավորիչ օրինակով Շիրազը ցույց է տալիս, որ խառնամուսնությունը օտարների հետ տարածված երևույթ է դառնում, իսկ այն անհետևանք չի անցնում ազգի համար:

Հայ պատանին հարս է բերում բյուզանդուհի մի ...կնկա,
Բյուզանդուհի, հելլենուհի, կամ պարսկուհի են բերում...
Էսօր-էգուց է՝ արաբը կգա,
Արաբը չգա՝ սելջուկը հո կա,
Պարսիկը կգա իր իլած Վանից,
Մեզ դուրս կվանե մեր մի բուռ տանից...

Մեծ պոետը հայ երիտասարդ ընթերցողին հիշեցնում է զգոն, ուշիմ լինել բոլոր թշնամիների նկատմամբ:

Եզրակացություն

Սույն հետազոտական աշխատանքը գրելիս կատարվել է բնագրային, բառապաշարային, ոճաբանական ուսումնասիրություն՝ կապված այս թեմայի դասավանդման հետ: Հ.Շիրազի <<Անի>> պոեմը, որը գրվել 1950-1951թթ. և տպագրվել 2011թ., այսօր հայ բանասիրության, շիրազագիտության լավագույն ձեռքբերումներից է: Գրականագետների, մանկավարժների և սովորողների առջև լայն հնարավորություն է բացվում նորովի ուսումնասիրել մեծ պոետին, նրա ստեղծագործությունը:

Կարևորելով ստեղծագործության քիչ ուսումնասիրվածությունը՝ եզրակացրել եմ.

1. Լինելով տասնամյակներ շարունակ անուշադրության մատնված՝ Հ. Շիրազի <<Անի>> պոեմը այսօր նոր խոսք ունի ասելու մանկավարժին, սովորողին, որին ուղղորդում է ուսումնասիրել նյութը երկու ուղղությամբ՝ բնագրային և բառապաշարային:

2. Պոեմը նպատակահարմար է արդիական մեթոդներով դասավանդելու համար:

3. Պոեմը գաղափարական առումով համեմատելի է նոր դարաշրջանի մարտահրավերների հետ՝ գայթակղիչ հրապույրներով, իրենց քայքայիչ ազդեցություններով, ազգային ավանդույթների, կրոնի, ընտանեկան հարաբերությունների և հայրենասիրական դաստիարակության առումով:

Այսպիսով, նյութը ամբողջապես և ընդգրկելի ներկայացնելու համար կարելի է կազմակերպել նախագծային աշխատանք, որում ներառել գեղարվեստական ստեղծագործության ուսումնասիրության տարաբնույթ ուղղություններ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Աճառյան Հր.: Հայոց անձնանունների բառարան: Երևան. ԵՊՀ հրատ.: 1942-1962թթ., 248էջ:
2. Ար. Լաստիվերցի: Պատմություն: Թարգմանությունը՝ Վ.Ա.Գևորգյանի: Հայ մատենագիրներ: -<< Հայաստան>> հրատ., Երևան.- 1971, 88 էջ:
3. Դոլուխանյան Ա.: Անի մայրաքաղաքը Խ.Աբովյանիև նրա ժամանակակիցների գնահատմամբ (Խ. Աբովյանի ծննդյան 200-ամյակի առթիվ): 13 էջ:- <http://hpj.asj-oa.am/>
4. Հայոց պատմություն: Դասագիրք բարձր, ուսումն. Հաստատ. Համար: Խմբագրությամբ պրոֆ. Հր.Սիմոնյանի: ՀՀ ԳԿՆ ԵՊՀ Հայոց պատմ. ամբիոն: - Երևան, ԵՊՀ հրատ.- 2012, 872 էջ:
5. Շիրազ Հ.: Անի: Պոեմ/Կազմ.՝ Ա.Կարապետյան (Շիրազ).-Եր.: ԵՊՀ հրատ. 2011 .- 308 էջ + 4 էջ ներդիր:
6. Սամուել Անեցի: Հաւաքմունք ի գրոց պատմագրաց յաղագս գիւտի ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս: Հայաստանի Ամերիկեան համալսարան: - <http://www.digilib.am/>
7. <https://lib.armedu.am/files/resource/files/2022-02-24/6588f3a3ca1ed9b5dd824197a59c1222.pdf>